

ԿՐՕՆ*)

Թագաւորաց Բ. գրքում պատմուած է, որ մովբացոց իշխանը տեսնելով, որ հրէաները քաղաքը շրջապատել են քաղաքի պարիսպների վրայ զոհում է իւր աւագ որդուն. հրէաները այս տեսնելով յուսահատուած են և հեռանում. նման դէպքեր պատմուած են և Նօրմանական առասպելներում. այսպէս մի իշխան իւրաքանչիւր տասը տարուց յետոյ զոհում էր մի որդուն և այսպիսով առասպելական ձերութեան է հասնում, հին հռոմէական սպարապետները իրենք իրենց զոհում էին աստծուն, որ զինուորներին խրախուսեն և թշնամիներին վախեցնեն: Մարդկային զոհաբերութիւնը աստուածներին և հանճարներին նոյնպիսի հաճոյք է պատճառում, ինչպէս յաղթող զօրավարին, որը իւր թշնամիների գլուխը հրամայում է թռցնել իւր իսկ ներկայութեամբ, նոյնպէս է և նախնիքների պաշտամունքի ժամանակ, եթէ հանգուցեալի հետ սպանում են նրա կնոջը և գերիներին, այդ միայն նրա համար, որ նրա ստացուածքն է այդ: Մարդկային զոհաբերութեան տգեղ սովորութիւնները տարածուած են յատկապէս արևմտեան Աֆրիկայի իշխանութիւններում Բինինում, Դագօմէում և Աշանտիում: Միջին Ամերիկայում, Մայա ցեղի մէջ բարոյական զգացումը վաղուց զարգացած էր այնքան, որ մարդկային արիւնը զոհաբերութեան ժամանակ գործադրում էին շատ թեթև կերպով: օրինակ քուրմը կուռքի առաջ ծնկաչոք ծակակող պարանով իւր լեզուն ծակում էր և արիւնը թափում զոհի ամանի մէջ:

Որքան աւելի է զարգանում գիտակցութիւնը և որքան աւելի ըմբռնում են իրենց աստուածացրած էակների էութիւնը, այնքան աւելի է պարզուում աստծու և մարդկանց մէջ եղած նմանութիւնը. աստուածները դառնում են իդէալական էակներ, որոնք այլ ևս սովորական մարդկային պահանջներ չունին: Տնտեսութիւնն էլ որքան զարգանում է և որքան մարդը ըմբռնում է սրա արժէքը, այնքան աւելի խուսափում է աւելորդ և շռայլ զոհաբերութիւններից: Սկսում են զոհի սեղաններ պատրաստել և այդ ժամանակ աստծուն տալիս են զոհի փոքր մասը, մեծ մասը զոհաբերողն ինքն է վայելում, այլ տեղերում սկսում են խորհրդաւոր ընծաներ տալ, որոնք ոչ! մի արժէք չունին, օրինակ չինացիք փոխանակ ոսկեայ և արծաթեայ ձողերի տալիս են ոսկէջրած և

*) Տես Արարատ 1917 թ. Սեպտեմբեր-դեկտեմբեր, եր 790—806:

արծաթէջրած թղթեր կամ այլ տեղում փոխանակ կոպի, հաւ են զոհաբերում և այլն:

Բացի ազօթքը և զոհաբերութիւնը աստուածներին դիմում են նաև զղջման և ապաշխարութեան միջոցներով: Իրենց զրկանքների ենթարկելու այս սովորութիւնը վաղ ժամանակներից գոյութիւն ունի: Շատ ժողովուրդներ հաւատում են, որ ուտելիքի և խմելիքի հետ կարելի է կուլ տալ որ և է չար էակ և վերջինս կարող է մարդուն հիւանդացնել: Նոյն իսկ ներկայ եզդդի մի թշնամական հայեացքը կարող է կերակուրը թունաւորել: Հարաւային Ամերիկայի հնդիկները՝ խուսափում են Եւրոպացիների ներկայութեամբ հաց ուտելուց: Տարուական դանազան պտուղների, ուտելիղէնների արգելքը այս հայեացքի հետևանք է: Այս հիման վրայ առաջ են գալիս պասերը, Պիրրե և նախազգուշացման միջոցներ. մանաւանդ երբ ննջեցեալ կայ, չեն ուտում, մինչև նրա հոգին տանից զուրս գար: Իսկական, անկեղծ տխրութեան արտայայտութիւններն այնպէս նման են նախազգուշացման միջոցներին, որ դժուար է որոշել, թէ մին է իսկական տխրութեան հետևանքը և միջոցը նախազգուշացման միջոցը. օրինակ հանգուցեալի ժառանգը հանգուցեալի հոգու նախանձը չչարժելու համար հազնում է ցնցոտի, բայց և վշտահար անձը նոյնպէս չի կարողանում մտածել իւր զգեստի մասին: Վշտի, թախծի հետևանք է և ննջնաձաղկումը, որը բարոյական գաղափարի ազդեցութեան տակ դառնում է կրքի զսպման միջոց: Ճգնաւորը իւր մարմինը ձաղկելով և տանջելով կարծում իւր հոգեկան ոյժերն է ամբացնում. իրեն զսպելով, հեռու պահելով որոշ ուտելիք—խմելիքներից ուզում է իւր կամքը աւելի բարձր նպատակների ծառայեցնել: Առհասարակ այսպիսի դէպքերում սեփական կամքի զսպումը գլխաւոր տեղն է բռնում. յայտնի է, որ տրեւտեան Ասիայում աստուածունու քրմերը իրենք իրենց ներքինիացնում էին:

Մաքրուելու մի ուրիշ ձևն է մկրտութիւնը: Տունիսի մէջէտի մէջ կայ երկու սիւն, որի միջից անցնում են հիւանդները, մանաւանդ յօղացաւ ունեցողները, որ ցաւից աղատուեն: Կան ժողովուրդներ, որ այս մասին գաղափար չունին, ուրիշների մէջ ընդհակառակը խիստ զարգացած է. Բօրօրօ ցեղի մէջ ամեն մի դազան սպանելուց յետոյ նախ քուրմը լաւ մաքրում է զանազան ազօթքներով և ապա ուտում են, ենթադրելով, որ կարող է գազանի մէջ չար ոգի լինել: Օնտօն—Ճավա կղզում երբ նոր մարդ է մանում երկիրը նախ քուրմը նրան մաքրում է չար ոգիներից, յետոյ միայն ընդունում են: Հարաւային սիբիրական կազան ցեղը զոհաբերութեան ժամանակ իրենց մեղքերը իբր թէ բառնում են սպիտակ ձիուն և ապա աղմուկով, աղաղակով իրենց

մօտից քշում, հեռացնում են. Հնդկաստանում ևս մեռեալների հանդիսի ժամանակ իրենց և մեռեալների մեղքերը բաձնում են գոմէշի վրայ և իրենցից հեռու քշում:

Մինչդեռ նախնական, պարզամիտ ժողովուրդների աստուածները մեծ մասամբ տեղական նշանակութիւն են ունենում, աւելի զարգացած ժողովուրդների մէջ աստուածները ընդհանուր նշանակութիւն են ձեռք բերում:

Տեսանք, որ կրօնի, պաշտամունքի մէջ հրեւում են խորհրդաւորութեան հիմքեր, որոնց հետագօտելը բաւական դժուար է, որովհետեւ այժմ աշխատում ենք բանականութեամբ և տրամաբանօրէն հասկանալ այն, ինչ որ ըստ ինքեան կէս զիտակցական բնադրական երևոյթ է: Առհասարակ ժամանակակից կուլտուրական մարդը միակողմանի դատողութիւն, պատրաստութիւն ունի և պատրաստուած չէ անկողմնապահ հետագօտելու կրօնի այդ շրջանը: Խորհրդաւորութեան գաղափարի գլխաւոր աղբիւրը երազներն են. շատ ժողովուրդներ հաւատում են, որ երազում տեսնում են իրենց հոգու թափառումների պատկերը և այստեղից հզարեացնում են, որ կենդանի մարդիկ էլ կարող են հեռուից ազդել միմեանց վրայ: Միտք է յղանում այդ ներքին ուժերը հպատակեցնել իրենց և ծառայեցնել, այստեղից և խորհրդաւոր արարողութիւններն են երեւան գալիս: Խորհրդաւորութեան հետեւանքն են նաև գուշակութիւնները և մարգարէութիւնները: Ապագան իմանալ և ըստ այնմ վարուելու ցանկութիւնն այնքան բնական է և երբեմն այնքան մեծ, որ ըստ ինքեան մղում է զանազան գործողութիւններ կատարելու: Նման երևոյթ մեղանում էլ դեռ կայ. օրինակ գուշակութիւն թղթախաղով, զոյգ ու կէնտ ասելով, խէր—շառ, Աստուած ասելով. բոյսի թերթիկներ սրկելով (սիրի—սիրի) ճանապարհին հանդիպած մարդուց գուշակութիւն անելով (քահանային հանդիպելը վատ նշան է համարում). այս բոլորը նպաստում են մի տեսակ ներքին անհանգստութիւնը մեղմելու. սա մի տեսակ արտացոլումն է ներքին լարուած դրութեան:

Գուշակութեան միջոցները կարելի է երկու գլխաւոր խմբերի բաժանել. մեքենայական և հոգեկան. վերջինը միայն խորհրդաւորութեան հետ որոշ առնչութիւն ունի. մեքենայական են օրինակ թուղանների թռիչքից, կենդանու վորոտիքից, ոսկր ձգելուց և այլն գուշակելը. հոգեկան միջոցներն են ինքնամոռացութեան, երազատեսութեան, ընկնաւորութեան միջոցները *): Մեքենայա-

*) Ցայսօր մեզանում առանձին երազաճաններ ու երազաճաններով օրացոյցները զործադրում են հասարակ ժողովրդի մէջ:

կան միջոցները կարող են գործադրել ոչ ամեն մարդ, այլ նրանք, որոնք ընդունակ են այդ անելու, հասկանալու. ուստի առաջ են դալիս դուշակների և կախարդների խմբերը. Հոգեկան միջոց գործադրողները կամ իրենք են իրենց հոգեկան զմայման ենթարկում կամ որոշ ոգուց են ստանում այդ ոյժը, ոգին բռնում է նրանց, կախարգութիւնը և դուշակութիւնը բազմապիսի արտայայտութիւններ ունի զանազան ժողովուրդների մէջ. նկարագրել այդ ամենը դժուար է, հատորներ են պէտք, Այսքանն ասենք, որ դասական աշխարհներում դուշակում էին մեծ մասամբ կենդանիների փորտիքներով. նոյնը ծանօթ էր նաև Ամերիկայի, Մեկսիկայի և Պերուի հին ցեղերին: Դայակ ցեղի մէջ դուշակում են խոզի փորտիքով, երբ ուղում են աստուածների կամքն իմանալ, խոզին բերում են հրապարակ, ցեղապետը ճառ է ասում դառնալով խոզին, նրան անուանում է հոգևորուած խոզ, չորս կողմը մոխիր է ցանում, ապա անիծում է խոզին, եթէ ճիշտը չասէ, թևինչպէս պէտք է վարուել այս դէպքում, ապա մորթում է խոզը, արիւնը լցնում մի ամանի մէջ և ապա լեարդը հանում ու նայում. եթէ լեարդը մութ գոյն ունի ու վրան բծեր կան՝ վատ նշան է եթէ լեարդը շրջապատուած է մեծ արեւատար անօթներով՝ լաւ նշան է, եթէ լեղին ծածկում է լեարդին վատ նշան է: Սիրիբի շամանները ոչխարի թիակը կրակն են ձրում և նրա վրայ առաջ եկող ձեղքուածներից դուշակութիւն անում. հին Արևատանում կրիային կրակն էին ձրում և ըստ այդմ դուշակութիւն անում: Բաւական տարածուած է կենդանիների գործողութիւններից դուշակութիւն հանելը. այս դէպքում առաջին տեղը բռնում են թռչունները. յոյներն ու հռոմէացիք յատուկ ուշադրութիւն էին դարձնում թռչունների ձայնին, օրինակ նոր տուն շինելու, նոր արտ հերկելու, բարի դուշակութիւն ստանալու համար պէտք է լսեն մի շարք-թռչունների երգ. երբեմն սրա համար մի քանի օր ու դիշեր են գործադրում: Երբեմն էլ այդ ահագին աշխատանքից ազատուելու համար տան հիմքը ձրելու ժամանակ սկսում են աղմուկ, աղաղակ, դողդոտոց բարձրացնել և այդպիսով թէ լաւ, թէ վատ դուշակութիւնները վերջացնել, խլացնել: Չինացիք դուշակութեան առանձին ձև ունին. շախմատի տախտակի վրայ թափում են բրնձի հատիկներ և զնում են հաւի առաջ, որ ուտէ, դուշակութիւնը կախուած է նրանից, թէ հաւը տախտակի ձր տեղից է սկսում կուտ հաւաքելը:

Նախնական ժողովրդի համար աւելի մեծ արժէք ունին իրականացած դուշակութիւնների մի քանի պատահական դէպքերը, քան անժխտելի տրամաբանական ապացոյցները. դուշակութեան իրականացած դէպքերը լաւ յիշուում են, իսկ չիրականացածները

սովորաբար շուտով մոռանում են. այժմ էլ օրինակ եղանակի գուշակութիւններին ժողովուրդը հաւատում է*):

Գուշակութիւնների միւս խմբին պատկանում են նրանք, որոնց մէջ գուշակոյն ինքն է որ և է գործողութիւն կատարում: Զանազան տեղերում խողի յատուկ ոսկրներով ևս գուշակում են, բայց ամեն մարդ չի կարող այդ գուշակութիւնն անել, հարկաւոր է որոշ ձևեր իմանալ: Աֆրիկայի բարբոզու ցիլը մշակել է այս գուշակութեան համար բաւական բարդ համակարգութիւն: Ժիւնօն ուսումնասիրել է դրանցից մի խումբը, որտեղ գործադրում են 27 ոսկր զանազան կենդանիների, տարբեր սեռերի և հասակների. մի քանիսն ընտանիքի զանազան անդամներն են նշանակում, միւսները՝ ընտանիքի նախնիքները, երրորդները—յանցաւորներին, ճանապարհորդներին, մի ուրիշ խումբ էլ միայն իրեր են նշանակում, օրինակ՝ սպառազինութիւն, գիշեր, աշխարհ, վատ լուր, փող: Այստեղ գլխաւոր նպատակն է իմանալ ապագան. բայց կան գուշակութիւններ, որտեղ պէտք է իմանալ միայն թագնուած բանը. օրինակ գտնել գողին: Մարդարէանաւու համար ամենակարևորն է մեռածների հոգիների, գերբնական ոյժերի հետ յարաբերութեան մէջ մտնել. այս բանի համար քուրմը կամ զմայլանքի մէջ է ընկնում և յարաբերութիւն է սկսում մեռածների հետ ու ապա պատմում է այն մասին, ինչ որ տեսել է ու լսել. կամ հոգին ինքն է բռնում և սկսում է խօսել մարդկանց հետ. վերջապէս ոգին սկսում է իւր ներկայութիւնը ցոյց տալ զանազան ձայներ հանելով կամ կենդանի մարդկանց մէջ է երեւում մարմին առած: Յաճախ մի քանիսը այս ձևերից միաժամանակ են գործադրում:

Զմայլանքի մէջ ընկնելու միջոցները բաւական զանազանակերպ են: Նախնական ժողովուրդները զառանցանքը, զգայաբանի պատրանքը իրական են համարում և սիրում են այդպիսի դէպքերն արհեստականօրէն առաջ բերել. նոյնիսկ նարկոտիկ միջոցներով, ուստի նարկոտ պարունակող նիւթերը մի տեսակ խորհրդաւորութեամբ են շրջապատուած և գործադրում են առանձին ձևականութիւններ կատարելով: Այս տեսակ խորհրդաւորութեամբ էին գործադրում հին Հնդկաստանում արինբը սօմա իմիչքը, որի պաշտամունքը կատարում էին յատուկ քրմեր: Առանց նարկոտիկ միջոցների ևս կարելի է զմայլանքի մէջ ընկնել. օրինակ խառնիճաղանջ աղմուկը, բարձրաձայն երաժշտութիւնը, խելա-

*) Մեզանում էշմիածնի օրացոյցի մէջ եղած եղանակի գուշակութիւնները մի քանի տեղերում նոյնիսկ ուսս գիւղացին հաւատում են:

ցնոր պարերը հին Յունաստանում նպաստում էին այդ բանին: Երբևեմ էլ սեռական խառնակ կեանքը, օրինակ հին Կապադովկիայում, գործադրում է իբրև միջոց. կամ փոխանակ ազմուկի գործադրում են միօրինակ ձայները, թմբուկի որոշ տակտով անդադար նուագելը. սրանք արդէն հիպնոսացման միջոցներ են. այս դէպքում իբր թէ ուրուականները երևում են աւելի կենդանի, քան երազների պատկերներն են: Ուր բացի քրմերից զմայլանքի մէջ են ընկնում դադանի ընկերութիւնները, այն տեղերում յաճախ ամբողջ ցեղը հիւանդագին դրութեան մէջ է ընկնում, այս հոգեկան երևոյթները, շնորհիւ իրենց վարակիչ բնոյթի շատ ցեղերի մէջ են տարածուած*):

Երբ ոգին մտնում է որ և է ընտրեալ անօթի մէջ և խօսեցնում է նրան, անհատը չէ առանձին ուշադրութեան արժանանում, այլ ոգին ինքը: Մօօրի ցեղի մէջ ընդունում են, որ մեռած ծնուած երեխաների ոգիները չար են և վտանգաւոր: Երբ օրինակ այդպիսի երեխային թաղեն մի վանդակի մօտ, որի մէջ կայ թութակ, ոգին կմտնի թութակի մէջ և սրան կստիպէ յիմարութիւններ անել և մարդկանց նեղել: Մի այլ դէպքում երեխայի ոգին մտել է մողեսի մէջ և ապա ինչ որ Ուգիա այդ ոգու և ժողովրդի մէջ միջնորդ է հանդիսացել, զանազան դուշակութիւններ արել. վերջը ոգին դարձել է պատերազմի աստուած և զլիաւոր հրամանատարն եղել է Ուգիան. վերջինս պատերազմներից առաջ որ և է դուշակութիւն է արել, զինուորներն էլ նրա նման յատուկ ոգով բռնուել են:

Ոգիների պաշտամունքը, որոշ չափով յիշեցնում է մեր ժամանակի ոգեհարցութեան երևոյթը. (спиритуализмъ). մի երևոյթ, որ Զինաստանում բաւական զարգացած է. այս երևոյթները կրօնի նախնական աստիճաններն են միայն. Մոգութիւնը և կախարչութիւնը նոյնպէս կրօնից առաջ եկող երևոյթներ են, երբ ոգիների, ուրուականների երկիւղը մեծ տեղ էր բռնում և մարդիկ պաշտպանողական միջոցների էին դիմում, ազատուելու այդ ոգիների նիւթական չարիքներից, մինչև որ յետոյ իրենք էլ սկսում են ոգիներին նուաճել և սրանց օգնութեամբ ուրիշներին վշտանել, կախարդել:

Հետաքրքրական է կախարդելու երևոյթը, որը յատկապէս զարգացած է հողագործների մէջ, որոնք աշխատում էին պաշտպանութեան միջոցներ ձեռք առնել կարկտի, երկարատև անձրև-

*) Այս երևոյթի մանրամասն ուսումնասիրութիւնը տես Михайловский соч. II т. «Герои и толпа, Патологическая магия».
Կազմող

ների դէմ. մեծ մասամբ սպառնալիքներ են ուղղում ամպերի հասցէին: Բրազիլիայում փոթորկին վախեցնում են փշոտ ճիւղտով, հարաւային սլաւօնները ամպերի վրայ հրացան են արձակում և ապա դուրս են բերում մանգաղները, գերանդիները և այլ սուր զործիքները, որ կախարդները սրանցով ճեղքուեն*): Այս երևոյթի մէջ տեսնում ենք թէ նախամարդու ընութեան երևոյթների բացատրութիւնը ինչ խառնիճաղանչ, անտրամաբանական դրութիւն ունի:

Մեթազրուում է, որ փոթորկի համար կայ գերբնական ոյժ, որը դայրացի է և ուղում է մարդկանց պատժել. որովհետև երևի մարդիկ մի անկարգութիւն են արել 1881 թ. Ալեասկայում, երբ փոթորկին աւերումներ է դործել, տլինոիտները միանդամից եօթը բացատրութիւն են տալիս. ոմանք ասում են, որ անցեալ տարի մեռած երեխային հին ձևով չեն այրել, այլ թաղել են հողի մէջ կամ որ մի օրիօրդ մաղերը սանրել է ոչ թէ տանը, այլ դուրսը, կամ մի քարոզիչ տուն է տարել լիժի և այլն: Բատտակները եղանակի վատութեան պատճառը վնասում են մօտիկ ազգականների սեռական յարաբերութիւն ունենալու մէջ. Չինաստանում ընդունում են, որ եթէ թագաւորը լաւ է կառավարում եղանակը լաւ կլինի և ընդհակառակը, երբ ծուլանում է երկարատեւ երաշտ է լինում, թեթևամտութեան դէպքում՝ չորէյին է լինում: Կանտոնում, երաշտի ժամանակ, վիշապի ջրհորից բաժակներով ջուր են հանում տալիս երեխանեան, որ «անձրև ցանեն» այսինքն ջուրը դաշտում սրսկեն: Չոնգեան արշիպիւղում, Ամբօն լերան գլխին կայ մի կաճած, մէջը ջուր, երբ երաշտ է լինում, սկսում են ջուրը խառնել. որ անձրև գայ, 1790 թ., ինչպէս Կայնօլը պատմում է, ռուսիական մի գիւղում երաշտի ժամանակ գիւղացիները կանանց քրում են գետը և ստիպում են, որ բոլորն էլ լողան. սրանով ուղում են անձրև բերել: Մօնղոլները իրենց կեդտոտ շորերը ջրում չեն լուանում, կարծելով, որ այդ դէպքում կարկուտ և փոթորիկ կլինի: Ընդունում են ընդհանրապէս, որ կախարդները ջրերի հետ գործ ունենալով երաշտ են առաջացնում և այդ է պատճառը, որ կախարդութեան ժամանակ ջրով լի աման է լինում սովորաբար կախարդի մօտ**):

*) Աւգանում կարկուտի ժամանակ զուրս են ծղում դանապետ երկաթի կտորներ, յատկապէս կասկարէնը, որ կարկուտը կտրի:

Կազմող

**) Մեզանում սովորաբար նուրի-նուրի են սարքում երաշտի մամանակ. գետը, սուռն կանայք կամ երեխաները վարում են արօրով:

Կազմող

Բուսական տարօրինակ է «անձրևի քարերի» գործածութիւնը երաշտի ժամանակ. վագումու ցեղի մէջ ցոյց են տալիս մի սար, որից իբր թէ անձրև է դալիս. սարի վրայ կան քարեր (լեռնային բերեղ) որոնց միջոցով կարելի է անձրև բերել: Անձրևը դադարեցնելու համար կախարդն այդ քարերից մէկը տաքացնում է: Սամոյայում երաշտի ժամանակ քարի վրայ ջուր են ածում, իսկ երկարատև և յորդ անձրևի ժամանակ կրակի մէջ են ձգում քարը: Արևելեան Աֆրիկայում մեռած զօրավարները մագբրից և եղունգներից վտղի են պատրաստում, որ անձրև բերեն. ուրիշ աֆրիկական ցեղեր նախնիքների գերեզմանների վրայ ջուր են ցանում կամ ուտելիք ու խմիչք են դնում:

Խորհրդաւոր պաշտպանողական զանազան ձևեր են՝ ձեռքով երեսը ծածկելը, ձեռքը բռունցք դարձնելը, ցուցամատը մեկնելը, երեսին խաչ հանելը և այլն. բացի այդ մարդիկ ունենում են յուռութիւններ (ամուլէտներ) օրինակ դազանի ատամներ, ևղջիւրներ, ոսկրներ, խիստ և վատ հոտ արձակող բոյսեր՝ սոխ, դանազան տեսակի սխտորներ. աւելի զօրաւոր են համարւում իսկական թոյները: Բացի բնական յուռութիւններից կան և արհեստականները. վեր բարձրացրած ձեռքի ափը նշան է ժխտման, հեռանալու, պահանջու. Իսլամական աշխարհում այս ամենատարածուած յուռութիւն է: Տարածուած են և լիբր ձևով արհամարհանք արտայայտող յուռութիւնները: Դասական ժողովուրդների մէջ տարածուած էր Փալլօսը (տղամարդու սեռական անդամը). այժմ Մարալեան արշիպելագում էլ տարածուած է նոյնը, այլ և հակառակ սեռինը: Հաւատում են, որ երկաթէ իրերը մարդկանց չար ոգիներից պաշտպանում են. հնում քարէ գործիքներն են եղել թալիսմաններ: Հնդկաստանում երիտաներին շրջապատում են հոտաւէտ ծաղիկներով, զանգակիկներով. ուլունքներ են շարում վրան և զարդեր կարում, որ պաշտպանեն չար ոգուց*) ենթադրում են, որ չար ոգիները ծաղիկների հոտից ուրախանում են, զանգակիկների ձայնից զուարճանում և այլ ևս երեխային ձեռք չեն տալիս: Շատ յուռութիւնը յատուկ նպատակի, որոշ չար ոգուց պաշտպանուելու համար չեն շինուած. այլ ընդհանրապէս ամեն տեսակ «չար աչքից» ազատուելու: Չար աչքի վախը առաջ է եկել երևի նրանից, որ կան մարդիկ, որոնց հայեացքը խիստ է և մի տեսակ հիպնոսացնող:

*) Մեզանում եւս դիւղերում երիտաների վրայ զանազան թալիսմաններ են կարում, յատկապէս մոլլանների արած «գիրը» (մայա-Յուլգըր). կախում են նաեւ ուլունքներ, յուռութիւններ:

Մտգական գործողութիւնների ամբողջ շարքերի նպատակն է մարդու կամքի ոյժը կենդրոնացնել մի նպատակի վրայ, որով որոշ հզացում ոյժ է ստանում հեռու տարածութեան վրայ գտնուող առարկայի վրայ ևս ներգործելու: Յանկութիւնն այս դէպքում համարում է մտքի հայր: Որ և է թշնամու ֆլասելու համար նրա պատկերի նման խրձիկ են շինում, ապա անիծում ու ոչնչացնում և ենթադրում, որ խրձիկի նման թշնամին էլ իրապէս ֆլասուելու է: Կամ եթէ թշնամուց որ և է իր իրենց ձեռքն է ընկնում, օրինակ գլխատը, մազը եղունգը, սրանց վրայ են թափում իրենց թոյնը: Մոգութեան այլ տեսակն է «դիր անելը» գրելը. անէծքի, օրհնութեան որոշ բանաձևեր կան, որ գրում են յուռութի վրայ և մարդը իւր վրայ է ունենում միշտ կան և որոշ նշաններ. օրինակ հիւսիսային Աֆրիկայում մուսուլմանները իրենց ճակատին խաչի նշան են դաշում. աւելի հետաքրքիր խորհրդանշաններ պատահում են արևելեան Ասիայում: Կախարչութեան հաւատը նախնական ժողովրդի ամբողջ կեանքն է որոշում. առանց կախարչական միջոցների ոչ մի գործ չեն սկսում. ոչ այս են անում, ոչ ձկնորսութեան են դնում, ոչ դաշտ են մշակում, ոչ տուն են շինում և այլն: Այս պահանջների համեմատ բազմանում են մոզերը, կախարչները և ամեն մէկը որոշ տեսակի կախարչութեան ընդունակութիւն է ունենում: Սամոյայում քրմերի դասակարգը չորս խմբի է բաժանւում. մի խումբը կռուավարում է պատերազմի գլխաւոր աստուածներին, միւսը՝ պատերազմի տեղական աստուածներին, երրորդը՝ միւս աստուածներին, չորրորդը կազմում են կախարչները և մարգարէները: Մի քանի ժողովուրդների մէջ ընդունում են, որ կախարչն ի ծնէ կախարդ է լինում, ուրիշների մէջ ընդունում են, որ կարելի է այդ արհեստը ձեռք բերել և սովորել, ուրեմն ամեն ոք կարող է դրա համար պէտք է առանձնանալ, պատ պահել, նարկոտիկ նիւթեր շատ գործածել: Կախարչն ունի իւր կախարչական տունը, քարը, մաղխազը և այլն: Քրմերից թէև վախում են, բայց և նրանց պատասխանատուութեան են կանչում: Իսկ երբ քուրմը մի յատուկ աստծու քուրմ է, յանցանքը ձգում է աստծու վրայ և ինքն այդպիսով ազատւում: Երբեմն կախարչութիւնն ստանում է արիւնոտ և կռպիտ արտայայտութիւններ: Կախարչութիւնը հաւատի առարկ է եղել, կրօնի մի մասը կազմել. սակայն կրօնը հետզհետէ բարձրացել է և իւր հիմքը դարձրել բարոյականութիւնը, ուստի և կախարչութիւնը հետզհետէ անջատուել է, դարձել սնտոխպաշտութիւն: Այս փոփոխութիւնը երևում է յատկապէս հանդերձեալ աշխարհի նկատմամբ խոստացուած պարգևների և պատիժների մէջ: Հոգիները հանդերձեալ աշխարհում

մեծ մասամբ սովի են ենթարկուում, թափառում են կամ մտնում կենդանիների և բոյսերի մէջ: Հիւսիսային դայակների կարծիքով հոգին միւս աշխարհում այնպէս է ապրում, ինչպէս մահուան բողբոջին կար: Այլ ցեղերի կարծիքով հարուստը հարուստ, աղքատն էլ աղքատ կեանք է վարում միւս աշխարհում:

Կրօնի զարգացման բոլոր ձևերը տանում են դէպի աստուածութեան գաղափարը: Երբ մարդն իւր մտածողութեան համար փնտրում է աւելի բարձր բանական էակ և իւր հոգու հետ խօսող մէկին, հասնում է կենդանի անձնաւորութեան աստծուն, որքան էլ այդ գաղափարը խիստ տրամաբանական օրէնքների չհամապատասխանէ: Բոլոր հաւաքարանութիւնների եզրակացութիւնները վերջ ի վերջոյ տանում են այն բանին, որ մարդն ընդունում է մի գերագոյն ոյժի գոյութիւն, որն ամեն ինչ ղեկավարում է: Այս ըմբռնման ազօտ նշոյլներն անգամ երևում են նախնական ժողովուրդների մէջ, նշոյլներ, որոնք յետոյ կուլտուրական ժողովուրդների մէջ պարզուում և լուսաւոր կրօնի հիմք են դառնում:

4.

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԻՒՆ

Կան հին խորհրդանշաններ, որոնց մարդիկ այնքան են վարժուել, որ այլ ևս նրանց նշանակութեան մասին զրեթէ չեն մտածում, թէև նրանց մէջ խորը մտքեր են թաղնուած: Այս տեսակ խորհրդանշանից է Ֆէմիդա—արդարադատութեան աստուածուհու խորհրդանշանը. որի աչքերը կապած են, որով ուզում են անկողմնապահ ճշմարտութեան գաղափարն արտայայտել: Արդարադատութիւնը մի որոշ ժամանակի ծնունդ չէ և ոչ էլ որոշ մարդկանց համար միշտ գոյութիւն առած. նա երկարատե հասարակական կազմի արդիւնք է և եզակի անհատը նրա համար վաղանցուկ երևոյթ է: Արդարադատութիւնն անհատական կարիքները, անհատների առանձնայատկութիւնները անտես առնելով մի տեսակ քարացած դրութեան մէջ է մտում և յաճախ լսում է բողբոջ, որ *Suumus jus Suius in iura* (ամենաբարձր իրաւունքը ամենամեծ անարդարութիւնն է) Արդարադատութիւնը կոյր է ծնուել և միայն աստիճանաբար վարժուում է տեսնելուն և տարբերելուն և կամաց կամաց մօտենում է ճշմարտութեանը:

Ճիշտ է այն համատարած կարծիքը, թէ վրէժխնդրութիւնը իրաւունքի ելակէտն է: Առաջուց կարելի է ասել թէ ջիդը որոշ ոյժի էլէքտրական հոսանքի ենթարկուելով կանդրազարձնէ. բայց

առաջուց չի կարելի որոշել, թէ փայտի հատուածին ինչպէս կազտասխանէ մարդը, որովհետեւ այս դէպքում դադափարներին ու դգացումներին ամբողջ շարքեր գործում են և սրանք կարող են ահագին ոյժ անդրադառնալ, կարող և թոյլ անդրադառնալ: Երբեմն կիսաձայն արտասանած որևէ վիրաւորանք ահագին տղամուկի պատճառ է դառնում, երբեմն էլ աննկատելի է մնում: Մարդն իրէն հանդիսա գոյութեան համար պէտք է ունենայ բաւականութեան և ինքնավստահութեան զգացում, երբ այս դրութիւնը արտաքին որևէ միջամտութեամբ խանգարուում է, պահանջ է զգացուում այդ արտաքին խանգարիչ երևոյթը հեռացնել և նորից ներդաշնակութիւնը վերականգնել: Այս նպատակի համար վրէժը ամենաշուտ ու կարճ ճանապարհն է: Նախնական գոյութեան պայքարում ով ընդունակութիւն ունի և պատրաստ է իրեն հասցրած մնասի համար վրէժ լուծել, նա կարևոր առաւելութիւն ունի: Յաճախ վրէժը բողբեկան անդրադարձման ընոյթ է կրում. հասցրած մնասը կամ անարգանքը ներքին ոյժերի բռնկումն է առաջ բերում և որևէ կերպ արտայայտուում, առանց հաշիւ տալու, սրբան իրօք բաւականացաւ անհատը և ճրքան համապատասխան էր այդ միջոցը: Այդպիսի կէս միջինայական արտայայտութիւններ կան և կուլտուրական մարդկանց մէջ. բռնկուող մարդը այժմ էլ բռնկման բողբեկն շարտում է աթոռը. այս օրինակ երևոյթ նկատուում է նաև երեխաների մէջ, որոնք վիրաւորանքի համար վրէժ լուծելու դէպքում առաջին պատահած իրով հարուած են հասցնում,

Վրէժը դեռ իրաւունքի արտայայտութիւնն է. իրաւունքը ամբողջ հասարակութեան կամքի արտայայտութիւնն է և ոչ անհատի: Վրէժն էլ կարող է իրաւական արտայայտութիւն դառնալ, երբ դրա համար առաջուայ հասարակութիւնն իւր համաձայնութիւնն է տալիս: Հասարակական վրէժխնդրութիւնն էլ նոյնպէս անգիտակցական արտայայտութիւնն է. այստեղ հաշուի չի առնուում, սրբան իրօք անարգանք կամ մնաս հասցնողը գիտակցօրէն է արել այդ բանը: Ճշմարտութեան այն զգացում, որը մարդուն հարկադրում է անկողմնակալ վերաբերմունք ցոյց տալ նոյն իսկ թշնամուն, աստիճանաբար է դարգանում մարդու մէջ. երեխաներն էլ շուտով վիրաւորանքն զգում են, իսկ արդար վերաբորմունք ցոյց տալը աւելի թոյլերին նրանց դեռ անծանօթ է. նոյն բանը կարելի է ասել նախնական ժողովուրդների մասին: Իրիտանական Նոր-Գլինէյում երբ տեղացին իրեն վերաւորած է զգում սկսում է նետեր արձակել և այդպիսով հանգստանալ, սովորաբար արձակում է տան տանիքի վրայից; առանց ուշք դարձնելու, թէ այնտեղ մարդ կան, թէ ոչ, յաճախ այդ բանը

վերջանում է մարդասպանութեամբ: Մի երիտասարդ մոծակներից նեղուելով գիշերը նետեր է արձակում զայրոյթից և պատահամբ վիրաւորում ընկերոջ ոտը: Աւտարալիայում Բուլմէրի ասելով դատական մենամարտութիւնը շատ տարածուած է. վիրաւորուածը բաւականութիւն է զգում, երբ ուրիշների ներկայութեամբ իւր ոտխին մի քանի հարուած է տալիս կամ վէրքեր է հասցնում:

Եւն տեղերում, ուր վրիժառութեան սովորութիւնը թուլանում է, առաջ է դալիս կատարման սովորութիւնը. հասցրած ֆլասի փոխարէն ստանալ նոյնչափ օգուտ և այդպիսով բաւարարուել: Շատ պարզ միտք է ըստ ինքեան. հարուածի փոխարէն հարուած տալ, աչքի տեղ՝ աչքը, ատամի տեղ՝ ատամը. այս բանաձևը վրիժառութեան որոշ արտայայտութիւն է: Արեսսինիայում մարդասպանին սպանում են նոյն զէնքով ու նոյն ձևով, ինչպէս ինքն է սպանել. Աֆրիկայում ֆլասուած ատամի փոխարէն ֆլասում են ֆլաս հասցնողի համապատասխան ատամը: Անհատական վրիժառութեան հետ զարգանում է և խմբական վրիժառութիւնը. արեան վրիժառութիւնը այս տեսակի երևոյթ է, խմբակցութեան անդամները միանում են և օտարների դէմ ելնում իբրև մի մարմին: Բոլորովին այլ դրութիւն է ստեղծուած, երբ խմբակցութեան խաղաղութիւնը խանգարում է խմբի անդամներից մէկը. այս դէպքում սովորաբար տուժում են ծէրերը և երեխաները, որովհետև սրանք խմբի համար ծանրաբեռնութիւն է: Նոր շէքբիտեան կղզիներում երեխաներին թողնում են, որ սովամահ լինին, իսկ ծերունիներին կենդանի թաղում են, ուրիշ տեղ ծերերին անտառն են քշում ուր նրանք կամ սովամահ են լինում կամ գազանների կերակուր դառնում: Առհասարակ նախնական ժողովուրդների մէջ, եթէ որ և է կերպ մէկը սովորականից դուրս է լինում, նրան առանց երկար դատողութեան ոչնչացնում են. օրինակ՝ երկուորեակ ծնուածներին, ոչ կանոնաւոր անդամներ ունեցողին, հաշմանդամին սպանում են: Մեծ դժբախտութիւնների ժամանակ, երբ որոշ մեղաւոր չի կարիլի գտնել, օրինակ՝ սովի, համաճարակի ժամանակ աշխատում են գտնել որ և է մէկին, որ մեղաւոր լինի և պատժել. օրինակ որ և է կախարդի մեղադրում են և սպանում: Այս պահանջը խորն արմատ ունի մարդու մէջ և այժմ էլ ժողովուրդը դեռ պահում է այդ սովորութիւնը: Պօլինէզիայում առաջնորդում կային թագաւոր—քահանայապետներ, որոնք պատասխանատու էին համարուած ապագայ բերքի առատութեան համար. սովի տարիներում դրանց սպանում էին, բանն այնտեղը հասաւ, որ ոչ ոք այլ ևս չէր ուզում թագաւոր լինել և այդ կարգը վերջը ատիպուած փոխել են. Չինաստանում կայսրը և պաշտօնեաները

նախատինքի են ենթարկուում. անբերրութեան և այլ դժբախտութիւններէ համար:

Աստասարդութիւնը մարդկային զարգացման ամենամայլ ուղեկիցներէց մէկն է ևղել, մի բան, որ հին ժողովուրդներէ նոյնիսկ միջնադարեան կարգերէ մէջ տեսնուում ենք բազմապիսի կերպով արտայայտուած: Անշուշտ խտասարդութեան մէջ կայ որոշ բաւականութեան զգացում և արգարադատութեան մէջ այդ զգացումը որոշ դեր է խաղում: Այժմ է, որ մահուան պատիժը հրապարակական չէ. մի քանի դար առաջ զուարճասէր ամբոխի այնքան տանջում էին դժբախտ զոհին, մինչև որ մեռնում էր: Որովհետև նախնական ժողովուրդն առհասարակ հակուսն ունի միակողմանի լինելու, ուստի տարօրինակ չէ, որ նրանք վրէժը պաշտամունք էին դարձնում և յանցանքի ու պատժի չափերը չէին աշխատում համապատասխանեցնել: Մասամբ խտասարդութիւնից անվերջ բաւարարութիւն ստանալու արտայայտութիւններ էին արտաքին և ներքին թշնամիներից վրէժ լուծելը, մարդկային զահարութիւնը:

Նախնական ժողովրդներէ մէջ մի տեսակ կոլու բոլորի ընդդէմ բոլորի դրութիւնն էր իշխում: Միայն մեռածների վերաբարմամբ նախնական ժողովուրդները, նոյնիսկ ամենացածր աստիճանի վրայ եղողները, իրենց որոշ պարտականութիւններ են վերագրում: Մեռածն ընդ միշտ չի թողնում, հեռանում կենդանի մեացածներին. մեռածը ուրականի ձևով ապրում է. նա վտանգաւոր ոյժ է: Ամեն մի մահ համարում է որոշ դաւադրութեան արդիւնք և կախարդի միջոցով աշխատում են փնտրել դաւադրին: Հասկանալի է, որ աշխատում են օտար ցեղից ընտրել, օտար ցեղի անդամից վրէժ առնելը սովորաբար լինում է խմբական վրիժառութիւն կամ դառնում է այդպիսին յաճախ այդ վրիժառութիւնը դառնում է աւանդական սովորութիւն և շարանակում է սերնդէ սերունդ: Աֆրիկայում օրինակ պատահում են զիւղեր, որի մի մասը միշտ լցուած է վրիժառութեամբ միւսի դէմ: Արաբիայում հնում նոյնն էր. Մահմետը կարողացաւ Մէդիինայի երկուսի բաժանած ժողովրդին հաշտեցնել: Կողմնակի միջնորդներ կամ իշխանութեան միջնորդութիւն այն ժամանակ է միայն երևան գալիս, երբ կոռուղ կողմերը իրենք ցանկութիւն են յայտնում հաշտուելու. սպանուողի ազգականները կամ ծնողները որոշ տուգանք են ուզում, երբեմն պահանջում են, որ սպանողը հեռանայ, գնայ տեղից և նոր սկսում են հաշտութիւն խօսել: Աւելի հեշտանում է գործը, երբ հակառակորդը միայն վերք է լինում հասցրած. միջին դարում Գերմանիայում այդպիսի վէրքերի համար նշանակուած տուգանքների ամբողջ ցուցակ կար, թէ՛ սրպիսի

վերքի համար, որ անդամի վրայ վիրաւորողը որքան պիտի վճարէ: Այս ճանապարհով արդէն արդարադատութիւնը սկսում է զարգանալ, որովհետեւ ուշադրութեան է առնում վիրաւորանքի չափը և աշխատում են համապատասխան հատուցման չափը որոշել: Ով վրէժի չի դիմում իւր բռնաբարուած իրաւունքը վիրահանդնելու համար, նա դիմում է իւր ցեղակիցներին կամ ցեղի ներկայացուցիչներին և խնդրում, որ իր պահանջը ճշմարտութեամբ տնօրինէն կամ ուղղակի տասած իրաւունք ստեղծեն: Երբ վրէժի առարկան համայնական բնոյթ ունի այս դէպքում տուժող կողմը աշխատում է գործն ուռցնել, կողմնակիցները գրաւել: Հարուային Գլխնէայում պատահում են այսպիսի դէպքեր. երբ մի ջմարդի կնոջ մի այլ ցեղի մարդ հրապուրում ու փախցնում է օրինական ամուսինը յարձակում է մօտիկ գիւղի վրայ և առա, ին պատահած մարդուն սպանում է և պահաջում, որ անառակմարդուն իրեն յանձնեն: Երբ յայտնում են, որ չկայ դնում է մօտակայ գիւղը և այլն. ապա գիւղերը միմիանց վրայ են յարձակում. ամբողջ շրջանում սկսում է պատերազմ, մինչև որ մի ցեղի գլխաւոր համաձայնում է տուգանք տալ, ըայց ոչ օրինական ամուսնուն, այլ ցեղի գլխաւորին, որովհետեւ ամուսինը մարդ սպանելով իրաւունքից զրկւում է. տուգանքը վճարելուց յետոյ խաղաղութիւնը վերականգնում է: Նման երևոյթներ կան և այլ տեղեր. Ենուդէ ցեղի մօտ երբ պարտատէրը չի կարողանում ստիպել, որ պարտապանը պարտքը վճարէ, ցեղի գլխաւորից մի թանգարժէք բան է զողանում փոխարէնը. ցեղապետն ստիպում է, որ պարտապանը վճարէ և աւելին է առնում և մեծ մասը իւրացնում է: Երբեմն տուժողը ինքն իրեն է քնասում, նոյն իսկ իրեն սպանում է, որ ուշադրութիւն գրաւէ և իւր հակառակորդին նեղ զրութեան մէջ դնէ: Հնդկաստանում պարտատէրն իրեն քաղծի է ենթարկում, որ ուշադրութիւն գրաւէ և ստիպել տայ պարտապանին պարտքը վճարել. պարտատէրը պարտապանի շէմքում պարկում է և յայտնում, որ ինքն իրեն մահուան կմատնէ, եթէ պարտքը չվճարէն:

Տեսնում ենք, թէ որքան դժուարութեամբ է իրաւունքը զարգանում. այս նպատակին հասնում են ոչ ուղղակի միջոցներով. բնականաբար կրօնական - միաստիկական հայեացքները տեղ են բռնում արդարադատութեան զարգացման մէջ: Մոգական կամ կախարդական հմայութիւնների միջոցով որ և է մէկը և իրեն և իւր ստացուածքը կարող է պահովել զանազան յարձակումներից. նոյնպէս տաբուական կարգադրութիւններով որ և է իր կարելի է սեփականացնել, այդ կարգադրութիւնը կարող է անել կամ ցեղապետը կամ ամբողջ ցեղը: Մամօայում թագաւորն իրաւունք

ունէր որ և է իր հրատարակել տարու և ժամանակաւորապէս կամ ընդմիջտ գործածութիւնից հանել: Նոր Հօմէրանեայում երեք տեսակ տարու էին անում, մէկը մասնաւոր անհատը իւր իրը տարու էր հրատարակում, որ ազատ է գողանալուց, յափշտակելուց, մէկ ցեղապետն էր անում, այս աւելի զօրաւոր էր, ամենից ուժեղը սակայն կախարդի արած տարուն էր, այստեղ տեսնում ենք որոշ աստիճանաւորութիւն և սեփականութեան զարգացման սկզբնաւորութիւն:

Աստուածային դատաստանը կամ օրդալիան այնքան մեծ ծաւալ չէր ստանայ, եթէ չենթադրէին, որ յանցանքի մէջ դեր են խաղում և նախնական մարդը աւելի կախարդական միջոցներից առաջ եկած վտանգներից է վախում, քան իրական վտանգներից: Որովհետեւ հնարաւոր չէ միշտ էլ ցուցումներով և այլ միջոցներով գտնել մեղաւորին, ուստի դատաստանի ժամանակ դիմում են նոյնպէս խորհրդաւոր միջոցների, որ գտնեն յանցաւորին: Աստուածային դատաստանով կամ որոշում են մէկի յանցաւորութիւնը կամ անմեղութիւնը, առաջին դէպքում գործադրում են տանջանքներ, փորձութիւններ, որոնք երբեմն փորձուողին ծանր հիւանդութիւն կամ նոյն իսկ մահ են պատճառում: Երբեմն մեռածի դիակը պտտեցնում են ամբողջ գիւղի մէջ և պատգարակիրները, իբր թէ ոգուց ներշնչուած, կանգնում են յանցաւորի տան առաջ, երբեմն էլ ում վրայ որ կասկածում են ստիպում են դիակին ձեռք տալ կամ վերաւորի վէրքը շօշափել, երբ արիւն է եխում վէրքից կասկածելիին համարում են իսկական յանցաւոր: Փորձութեան աւելի խիստ միջոցներն են՝ հրաշէկ անուխները, շիկացած երկաթը, եռացրած ջուրը և իւղը, երբ այս փորձութիւնների ժամանակ փորձուողը այրուածքներ է ստանում համարում է յանցաւոր, երբեմն ջուրն են ձուլում, եթէ խեղդում է յանցաւոր են համարում, այնուհետեւ մենամարտութիւնն սկսեց, եթէ կասկածելին յաղթում էր, համարում է յանցաւոր: Աֆրիկայում մինչև այժմ էլ շատ տարածուած է թոյնով փորձելու միջոցը, յաճախ թոյնը միայն գլուխի պտոյտ է առաջ բերում կամ սիրտ է խառնում և այդ յանցաւորութեան նշան է համարում, կամ աչքի մէջ թոյն են լցնում և աչքը փչանում է կամ ժամանակաւոր կուրութիւն է առաջ գալիս և այդ համարում է յանցաւորութեան նշան: Երբեմն ոչ միայն յանցաւորին են փորձութիւնները ենթարկում, այլ և զանգատաւորին, որ պարզուի, թէ ռոքան սա իրաւունք ունի զանգատ անելու:

Աւելի մնայուն միջոց փորձելու համար երդումն է, որ մինչև այժմ էլ շարունակում է, Հնում ոչ թէ աշխատում էին վերին, գերբնական օյժերին օգնութեան կանչել, որ սրանց առաջ ահա-

ւոր երդում տան, այլ որքան կարելի է աւելի սարսափ տարածեն երդուողի վրայ: Ճափոնացիք այրում են երգման թուղթը, փոշին ջրի մէջ խառնում և խմում, այլ տեղ սրից առնում են ժանգը ջրի մէջ խառնում ու խմում կամ աղ են խառնում ջրի հետ և խմում, ի նշան այն բանի, որ եթէ խոստումը դրժէ, մարմինը սրի ըստին կդառնայ կամ ունեցած չունեցածը աղի նման կլուծուի ջրում: Նախնական ժողովուրդների մէջ զէնքերի վրայ երդուելը կամ երդման ժամանակ զոհ բերելը տարածուած սովորութիւն է: Հասարակութիւնը նոյնպէս երգման ժամանակ որոշ մասնակցութիւն է ցոյց տալիս, որովհետեւ երդման ժամանակ ոչ միայն ինքն է պատժուում, այլ և այն խումբը, որին ինքն է պատկանում: Երբ ժողովուրդը երդում է իւր սեփական աստծով, այդ նշանէ, որ ինքը ամբողջապէս պատասխանատու է իւր աստծու առաջ և աստուած կպատժէ ամբողջ ժողովուրդին, երբ վերջինս իւր երդումը չպահէ:

Դատելու համար անհրաժեշտ է դատաւորը, այս պաշտօնը նախնական ժողովրդի մէջ կատարել են զանազան անձինք և մարմիններ: Նահապետը, տան գլխաւորը, ցեղապետը, քուրմը և այլն: Երբ խնդիրն աւելի ընդարձակ ծաւալ է ստանում այն ժամանակ մի քանի նահապետներ կամ ցեղապետներ հաւաքւում են և գործը վճռում, ուր որ միատիկան ուժեղ է, այնտեղ քրմերը հնչողութեամբ իրենց ձեռքում են կենդրոնացնում դատաւորութեան իրաւունքները: Սկզբներում վճիռները որոշ կարգի տակ չէին դրուած, որոշ օրէնքների հիման վրայ չէին կատարւում, այլ կախուած էին բոլորի ազդեցութիւնից. հետզհետէ աւանդութիւնները դառնում են սովորական և որոշ դեր են խաղում: Օրհասական նշանակութիւն ունի դատաւորներին ընծաներով կաշառելը. նախնական ժողովուրդների մէջ տարածուած է այն գիտակցութիւնը, թէ արդարանալը նոյնպէս պէտք է զնել, ինչպէս որևէ իր պէտք է զնել. աղքատը հաւակնութիւն չպիտի ունենայ, թէ արդարութիւն կարող է գտնել: Պօստը Աֆրիկայի ժողովուրդների համար ասում է, որ աղքատը դատաւորի առաջ համարւում է իրաւագուրդ անձնաւորութիւն, որովհետեւ սա չի կարող այն բոլոր ծախսերն անել, որ պէտք են դատաւորութեան բարեյաջող վախճանի համար: Աֆրիկայում ներքին Անգոլիայի ցեղերը սովորաբար օտարազգիների քարաւանների վրայ են յարձակւում են զանազան հերկորանքներով վերջիններիս դատի են ենթարկում և որովհետեւ դատարանի առաջ միշտ օտարազգին մեղաւոր է, ուստի քարաւանի տէրէրը սովորաբար պարտաւոր են վճարել այնքան տուգանք, որքան «արդար դատարանը» կվճռէ: Դատի ժամանակ ոչ միայն անհատն են ի նկատի ունենում, այլ և ամ-

բողջ ցեղը, որին պատկանում է մեղադրեալը կամ դանդաժաւորը. որ ցեղը աւելի լաւ զրահաւորուած է, բնականաբար արդարութիւնը նրա կողմն է լինում:

Դատավարութիւնը իւր զարգացման ընթացքում դանազան ձեւափոխութիւնների է ենթարկւում և նախկին վրիժառութեանը փոխարինում է պատիժը: Վրիժառութիւնը պարզ գործողութիւն է, իսկ պատիժը կարող է բազմապիսի նպատակների ծառայել: Պէտք է խոստովանել, որ այն գործողութիւնները, որոնց համարում ենք պատիժ, աւելի առաջ էին կատարւում, քան դրանց համապատասխան տեղմինն է ստեղծուել: Հոռոմէական կայսերութեան ժամանակ մահուան դատապարտուածին զոհում էին Իւպիտերի սեղանի վրայ: Սկզբում պատիժների թիւը փոքր էր, յետոյ անոնքի չափերի է հասնում. ապա նորից այդ անագին թիւը փոքրանում է. նախնական ցեղերի մէջ որ և է մէկին ցեղից դուրս անելը զրեթէ մահուան պատժի հաւասար է: Միջնադարեան մարդու համար մահուան պատիժը մի հանդէս էր. որին ներկայ էր գտնւում նա իւր միատեսակ կեանքի ձանձրոյթը փարատելու համար:

Չինացիք (այլ և պարսիկներն ու տաճիկները) մինչև այժմ էլ մեծ հաճոյք են ստանում տեսնելով մարդկային տանջանքները. կուլտուրայի յաղթանակներից մէկն է նաև այս զազանային հաճոյքը արմատախիլ անելը. թէև այնուամենայնիւ այժմ էլ որոշ տեղերում կայ այդ յատկութիւնը: Փոխանակ մարմնական պատիժների սկզբներում էլ աշխատում են դատապարտուածից փող ստանալ. սակայն այս սովորութիւնը տգեղ շահագործման միջոց է դառնում. հարուստների մէջ այն զիտակցութիւնն է զարթնում, որ ամեն տեղակ չարիք, յանցանք կարելի է դործել և փողով ազատուել. բացի այդ տուգանքը ունենոր մարդու տնտեսութեանը մնաս չի հասցնի, իսկ չքաւորի տնտեսութիւնը կքայքայէ:

Աւելի դանդաղ և ուշ է զարգանում ազատութիւնից զրկելով պատժելը: Սորա սկիզբն անշուշտ գտնւում է զոհ բերելու ժամանակ գերիներին պահակների հսկողութեան տակ պահելու մէջ: Նախնական ժողովրդի մէջ զժուար կգտնուի այնպիսի շէնք, ուր հնար լինի մէկին փակել, իսկ կապանքներն այնպիսի են, որ համբերութեան և տոկունութեան շնորհիւ կարելի է արձակել: Կան և այնպիսի կապանքներ, որոնք այնքան ծանր են, որ բանտարկեալի առողջութեանը վնասում են և նոյն իսկ մահ պատճառում: Նկատելի է և այն, որ այն մարդու կեանքը խիստ էժան էր գնահատւում. փոխանակ ծախքեր անելու, պահելու և կերակրելու աւելի հեշտ էր մահուան պատժի ենթարկելը: Դեռ XIX-րդ դարու սկզբում անճշտապահ պարտապաններին բանտարկում էին

և չէին կերակրում: Մաղազասկարում բանտարկեալը դեռ իր շղթաների համար էլ պէտք է փող վճարէր. կերակուրը ստանում էր աղբականներից. հակառակ դէպքում շղթաներով պիտի մանգար և ողորմութիւն խնդրէր:

Պատուից զրկելով պատժելը քիչ է յայտնի նախնական ժողովրդին: Էօկիմոսների մէջ ում պատիւը շօշափւում է, նա իւր հակառակորդի վրայ ծաղրական ոտանաւոր է կազմում և ապա որոշ նշանակուած օր գալիս է հաւաքուած ժողովրդի մէջ և երգում իւր ծաղրը, իսկ վիրաւորանք հասցնողը պատասխանում է. ով աւելի կծու է ծաղրում և ժողովրդին աւելի է ծիծաղեցնում, նա յաղթող է համարւում. իսկ յաղթուածն այնքան ճնշուած է զգում իրեն, որ ստիպուած է լինում գիւղից հեռանալ: Տասնանաջիների մէջ յանցաւորին նստեցնում են ծառի ամենացածր ճիւղի վրայ. ժողովուրդը գնում է, անցնում մօտովը, ծաղրում ու հայհոյում. առաջներում նրա վրայ նետեր են արձակում: Իբրև նմանօրինակ երևոյթ յայտնի է միջնադարում գործադրուող անարդանքի սիւնը, որին կապում էին յանցաւորին և խայտառակում, հրեսին թքում և այլն:

Ստացուածքների դէմ եղած յանցանքները սկզբներում մեծ նշանակութիւն չունին: Նոր—Համերանիայում զողացած իրերի տէրը զողին մի երկու խիտունջէ դրամ է տալիս և խնդրում, որ իրը վերադարձնէ, զողը հպարտանում է իւր ճարպիկութեամբ: Նոյն բանն ենք տեսնում Նոր—Գլինէայում. երբ բանջարեղէն են գողանում, տէրը հայհոյում է և սպառնում, որ միւս անգամ աւելի խիստ կվարուի եթէ ցեղապետն է գողանում, ձայն չեն հանում, որ չբարկացնէն: Այլ ցեղերի մէջ ընդհակառակը խիստ պատիժներ կան. Ամուրի ափերին ապրողների մէջ գողի աջ ձեռքը կտրում են և ապա իրենք հոգ են տանում այդ հաշմանդամի համար, չափի կղզում գողին խիստ կճմթում են, հնդիկ կուսկօ ցեղի մէջ կուրացնում են, Ձիլիում՝ սպանում են: Կուլտուրայի զարգացման հետ սեփականութեան իրաւունքները խախտողները աւելի ու աւելի ծանր պատիժների են ենթարկւում. սեռական անբարոյականութեան համար որոշ տեղերում յանցաւորին մահուան են դատապարտում, ուրիշ ցեղերում շատ թեթև աչքով են նայում: Օրէնքն սկսում է այն ժամանակ աւելի ուղիղ ու արագ զարգանալ, երբ ընթանում է բարոյականութեան պահանջների հետ ձեռք ձեռքի տուած: Իրաւունքի ու ճշմարտութեան դիտակցութիւնը աւելի ու աւելի լայն շրջաններ է ընդգրկում և վերջի վերջոյ հին աւանդութիւնների բոլոր պատնէշները ոչնչացնելու է: Դրամայի մէջ ներկայացրած արդարութեան յաղթանակը բանաստեղծական ըրպէական հաճոյք է, մի ցնորք:

որ մարդու հոգեկան պահանջին բաւարարութիւն է տալիս և ստիպում է հաւատալ, թէ արդարութիւնը հնարաւոր է լրիւ գործադրել Արդարութեան, ճշմարտութեան ձգտումը աւելի մեծ չափերով երևան է գալիս հանդերձեալ կեանքի մասին ունեցած պատկերացման մէջ. այս ձգտման հետևանք են՝ վերջին դատաստանի, յաւիտենական երջանկութեան ու տանջանքի մասին կազմած գաղափարները:

5.

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ.

Մարդկային կուլտուրայի զարգացման դժուարին ճանապարհի վրայ յետադարձ հայեացք ձգելով նկատում ենք, որ ընդհանրապէս յարատև փոփոխութեան մէջ նկատուում է անդիտակցական ոյժի հետզհետէ գիտակցական ոյժին ենթադասուելը կամ աւելի շուտ, որ գիտակցական ոյժերը ղեկավարում են անդիտակցականներին: Շարունակ գիտակցութեան հակողութեան տակ կատարուող գործողութիւնները երկար կրկնուելով վերջի վերջոյ դառնում են սովորութիւններ. այսպիսով առանձին անհատի աշխատանքը թեթևանում է: Մարդու մէջ այնուամենայնիւ բաւական բնազդներ կան, որոնք շատ էլ չեն փոփոխուել. զարգացման նպատակն այն է, որ բնազդական ձգտումները փոխարինուեն բանականներով: տեսնում ենք, որ գիտակցութեան հետ զուգընթաց է լինում յաճախ կենդանի զգացումը և սրտի կուլտուրան միմիանց չեն հակասում, ընդհակառակը փոխադարձաբար ձգտում են միմեանալու: Գիրը գտնելուց յետոյ ամեն մի գիտեցած բան կարելի է սառած դրութեան մէջ դնել, պահել, որին հէնց որ կենդանի մարդու բանականութեան շունչը կպչի կհալուի և կկենդանանայ: Եթէ ամեն մի տեղեկութիւն, որ բանականութեամբ է ձեռք բերուած, համարենք գիտութիւն, ապա այդ տեսակ մտքի նուաճումներ կդտնենք նաև նախնական ժողովուրդներին մէջ ևս: Իմացածք պէտք է կենդանի մարդկանց յիշողութեան մէջ ապրի, պէտք է կկող սերունդներին աւանդուի, այլապէս կկորչի անյետ: Այս տեսակ աշխատանքով ձեռք բերուած գիտութիւնը կոչւում է կրթութիւն:

Երեխայի կրթութեան ժամանակ աշխատում են հաղորդել նրան ոչ միայն բանականութեամբ ըմբռնած ու լաւ իւրացրած տեղեկութիւններ այլ և աշխատում են աշակերտի վրայ ազդելու որ ձեռք բերածը հեշտութեամբ կարողանայ գործադրել ցանկա-

ցած ըողէին: Ամենապարզ օրինակն է ման գալը. մանուկը սկզբում հազիւ կարողանում է ոտքերը շարժել, ուղիղ դնել, հետդհետէ այդ գործողութիւնը դառնում է սովորական և ման գալը դառնում է գրեթէ անգիտակցական գործողութիւն: Նոյն ձևով սովորում է ուտելը, խօսելը և այլն:

Այս կրթութեամբ անհատը ազատուում է ահազին բեռից. նա օգտուում է նախորդ սերունդների աշխատանքից. սակայն որքան այդ աւանդաբար ձեռք բերածը օգուտներ է տալիս, այնուամենայնիւ ունի իւր մէջ և փաստակար կողմը, որովհետև աւանդակների մէջ սովորաբար լինում է և շատ անմիա բան, որը յաջորդ սերնդի համար դառնում է բեռը: Բանականութիւնն է, որ քննադատում է այս դէպքում փաստակարը դէն ձգում և օգտակարը հանում:

Ընդհանրապէս նախնական ժողովուրդների դաստիարակութեան մասին շատ բան չի կարելի ասել, որովհետև մեծերն էլ փոքրերին շատ բան չեն կարող տալ, ոչ գիտութիւնից, ոչ ինքնակրթութիւնից. ուստի երեխաները մեծ մասամբ մնում են անուշադրութեան մատնուած և նրանց լաւ ու վատ արարքները չեն գնահատում: Ի. Վօլֆը մատնացոյց է արել, որ Եւրոպայում ցածր դասակարգերի մէջ երեխաների վատ արարքներին ու չարութիւններին ծնողները շատ զիջողաբար են վերաբերում. Մեթոդիկ կրթութեան սկզբնական սաղմերը նկատուում են այն սովորութիւնների սւ արարողութիւնների մէջ, որ տղամարդկանց ընկերութիւններում կան, ուր ընդունող երիտասարդը պէտք է որոշ կարգ ու կանոնի ենթարկուի: Երեխաների խաղալիքները ցոյց են տալիս, որ դաստիարակութեան զլխաւոր խնդիրը վայրիների մէջ ֆիզիքական ճարպիկութիւն ձեռք բերելու մէջն է. իբր եզակի օրինակներ պատահում են ժողովուրդներ, որոնց մէջ դպրոցներ էլ գոյութիւն ունին. ըստ Բեստի մաօրի ցեղի մէջ կային իսկական դպրոցներ: Այն տեղերում աւանդուածները իրենց մէջ քիչ գիտական բան ունին, համեմատած այն ահազին ծանօթութիւնների հետ, որ առասպելաբանութիւնը մատակարարում է:

Գիտական իմացութիւնը երկու նպատակ ունի. մարդը ձրգտում է նախ ընութեան մասին զազափար կազմել, նրա ոյժերը բացատրել, այլ և գոյութեան պայմաններն ու օրէնքները հասկանալ և ապա ինքն իրեն և մարդկային հասարակութեան անդամներին հասկանալ: Փիլիսոփայութեան մէջ գիտութեան բոլոր ճիւղերը միանում են և այդպիսով ձգտում դէպի յաւիտենական ճշմարտութիւնը գտնելու:

Յաւիտենական օրէնքի գոյութիւնն ամենից աւելի պարզ երևում է ջափի և բուխ մէջ: Շատ հին ժողովուրդներ թուի մէջ

մի առանձին խորհրդաւորութիւն էին տեսնում. Պիւթագորեան վարդապետութեան հետևողները վերջը թուերի մասին ամբողջ փիլիսոփայական ժամակարգութիւն կազմեցին: Թուի և չափի շնորհիւ մարդկային կեանքը կանոնաւորուում է, թէև թուի գործածութիւնը մարդկային առօրեայ կեանքում սկզբներում համարուում է անլուր յանդգնութիւն. ինչպէս այդ տեսնում ենք ս. Գրքի օրինակում, երբ Դաւիթը հրամայում է ժողովրդահամար անել այս բանի համար պատժի է ենթարկուում: Շատ կիսակիրթ ժողովուրդներ կարողանում են համարել մինչև երեքը. առանձին անուններ ունեն մէկը և երկուսը մնացած թուերը այս երկուսից են կազմուում ահազին բացատրութիւններ առաջ բերելով: Բրազիլիական բակաիբի ցեղի թուահամարութիւնը յաջակապէս ուսումնասիրել է Շտէյնինը. որից երևում է որ նրանք ունին թուականներ՝ տօկալէ=1 և ախաչէ=2. երեքին ասում են ախաու: Նրանք հաշուում են ձեռքերի և ոտերի մատերի վրայ. թուահամարը հասնում է մինչև վեցը. այնուհետև զանազան կօմբինացիաներ են կազմում այդ թուերից. երկուսը համարելու հիմնական թիւն է կազմում. երբ պէտք է հաշուել եգիպտացորենի 3 հատիկ ասում են 2 հատիկ և 1 հատիկ, հրբ 6 հատ է երկու երկու են բաժանում և մատերի վրայ համրում: Նախնական ժողովուրդը իւր ստացուածքի, իրերի հաշիւը չի իմանու. նա աշխատում է որքան կարելի է արմատներ հաւաքել, շատ թռչուններ, գազաններ որսալ, թիւը նրան չի հեաաքքրում: Երբ կարիք է զգացում ձեռք բերածը բաժանել ու մասնակցողների մէջ ահազին դժուարութիւն է սկսում. իւրաքանչիւր բաժնատէր լարում է իւր ամբողջ մտաւոր կարողութիւնը, խիստ հեաեում է, որ հաւասար բաժին լինի. եթէ իրեն խարուած է զգում այդ համարում է անպատուութիւն և աշխատում է անպատուաւ վրէժխնդիր լինել:

Ձեռքի և ոտքի մատերի գործադրութիւնը հաշուի ժամանակ իրենց ազդեցութիւնն են ունենում հաշուի զարգացման վրայ «ձեռք» ասելով հասկանում են հինգ. Գլինէայի հնդիկները քսանին ասում են «մորտ» Բերբերները 50 ասելու համար ասում են՝ չորս ձեռք, չորս ոտք և նորից երկու ձեռք: Կան ցեղեր որոնց յայտնի է բազմապատկման և հանման գործողութիւնը, նոր Գլինէայում կերեեղ ցեղը 7-ը այստէս է արտայայտում $2 \times 2 \times 2 = 1$:

Ժամանակը որոշելու դէպքում բաժանման սկզբունքը աւելի որոշ է երևում: Ժամանակն երևում է իրր մի ամբողջութիւն, միասեռ բան: Թէ ինչքան դժուար է առաջ գնում ժամանակի գաղափարի զարգացումը երևում է նրանից, որ գիլեալները դեռ այժմ էլ ժամանակի մասին պարզ հասկացողութիւն չունին: Օրը բաժանում են գիշերի և ցերեկի, առաւօտի և երեկոյի, այլ և

ասում են արևածագ, արևմուտ, ընդհանրապէս ի նկատի են ունենում արևի ընթացքը: Նրանք գիտեն երէկ և միւս օրը, աւելի հաշիւ չգիտեն. շաբաթուայ օրերի անուններ չունին և ոչ էլ գիտեն, թէ ամիսը քանի օր ունի: Ամիսների անունները նախնական ժողովուրդները սովորաբար եղանակի բերքերից են առնում. ամիսների թիւը տարբեր է, որովհետև լուսնական և արևի տարիները իրար հաւասար չեն: Աֆրիկայում ժամանակը որոշելու համար ուշադրութեան են առնում թէ երբ են թռչունները էրգում, ծառերը ծաղկում. կամչատկացիք գիտեն երկու եղանակ՝ ամառ և ձմեռ. սիւղկիուցիները ունին հինգ եղանակ, շողադրծները ցանելու ժամանակը սովորաբար համարում են տարուայ սկիզբը. օստեան թափառականները տարուայ սկիզբը համարում են ապրիլ ամիսը, որովհետև այդ ժամանակ եղջերուները սկսում են ծնել:

Ամիսների աւելի մանրամասն բաժանումն չունին նախնական ժողովուրդները: Արիացիք ամիսը բաժանում են երկու մասի՝ լուսնի ծնունդից մինչև լուսնի լրումը և լուսնի լրումից մինչև նոր լուսնի լրումը: Ըստ երևոյթին հին արիները գիտէին հինգ օրից բաղկացած շաբաթը. այս հաշիւը հնում գիտէին և Ճաւայի ընակիչները. տասնօրեայ շաբաթը գործադրում էր չինացիների, եգիպտացիների և յոյների մէջ. քսանօրեայ շաբաթը յայտնի էր մեկսիկացիներին. Կոնգոյի ջրաբաշխում ապրողները ունէին չորս օրեան շաբաթ. Եւրոպայի և Ասիայի ժողովուրդների մէջ յաղթողը դառնում է եօթնօրեան շաբաթ. եօթնօրեան շաբաթի հիմքը կազմում է եօթն մոլորակները, առաջ Բարեխոնում, ապա ուրիշ տեղեր: Գլխնէայում երբ մէկին ուզում են հիւր կանչել 20 օրից յետոյ ուղարկում են 20 հանգոյցներով պարան և հիւրը պէտք է ամեն օր մի հանգոյց քակէ, որ իմանայ երբ է զնալու իւր բարեկամի մօտ: Օրը աւելի մանր բաժանմունքների ենթարկելը, ժամերի վերածելը շատ ուշ է կատարում: Ամենահին ժամացոյցը եղել է ջրի ժամացոյցը (կլեպսիդրա) որը ծանօթ է եղել Ասորեստանում 600 տ. Ք. ա. Չինաստանում հաւանօրէն աւելի առաջ է երևան եկել:

Շատ դէպքերում ժամանակի և տարածութեան չափերը միմեանց հետ կապում են: Շատ բնական է որոշ տարածութեան ժամանակով չափելու միտքը. տարածութեան չափերը դժուար է զարգանում. «Հրացանի արձակած զնդակի չափ» կամ «մինչև որ Հայր Մերը կասեն» այս արտայայտութիւնները մինչև այժմ էլ մնում են կուլտուրական ժողովուրդների մէջ: Իսկ երբ ուզում են օր և է հոգ չափել պատահական մարդու քայն են չափ համարում. որ և է կտոր երկար ժամանակ չափելու համար կանգուն

են գործադրում. (դաստակից մինչև արմունկը): Իրրև բովանդակութեան չափ գործադրում են մարդու բուռը: Ինչպէս տեսնում ենք ժամանակը և տարածութիւնը չափելու համար զործ են դրւում դանազան իրեր. անսական թուերն ու չափերը երկարատե մատուր զարգացման հետևանքներ են:

Զարմանալի է, որ նախնական ժողովուրդների մէջ քարտէզի գաղափարը կայ, առաջին շանգամ քարտէզ նկարել է չինացի Իւն վաղի վրայ. նախնական ժողովուրդների քարտէզների վրայ առաջին անգամ լուրջ ուշադրութիւն է դարձնում Ռիխարդ Անդրէն և հաւաքում է բաւական նիւթ. այդ քարտէզները գործնական նշանակութիւն ունին և ծառայում են իրրև ուղեցոյց մի տեղ դնալու համար. քարտէզ նկարում են աւագի, փայտի կեղևի, քարի, հարթ ալտարակի վրայ և այլն: Մարշալեան արշապիւղագի բնակիչներն ունեն ծովի քարտէզը, որանդ ոչ այնքան կղզիներն են նշանակուած, որքան ծովի ծանծաղուտները: Էսկիմոսները նաևի դրսի մասի վրայ նկարում են ուղիէֆ քարտէզներ և մի քանի բարձրութիւններ էլ նշանակում: Հետաքրքրականն այն է, որ այդ քարտէզներում մաշտաբն այնքան աւելի է մեծանում, որքան աւելի է մօտենում քարտէզ նկարողի բնակավայրին: Լեռները, դետերը առանց առուների են մնում, կամ շուտ շուտ փոխում են այդ քարտէզներում. էականն այն տեղերն են, ուր նրանք կերակուր են գտնում:

Աստղագիտութիւնը դեղեցիկ օրինակ է ցոյց տալու այն ճանապարհը, որով ընթացել է բնագիտութեան զարգացումը: Կարելի է ասել, որ սկզբում բնագիտութիւնը համարում էին մարդու մասին եղած դիտութեան մի մասը, ոչ թէ այն յաւիտենական օրէնքներն ի նկատի ունէին, որոնց ենթակայ են լուսատու մարմինները, այլ նրանց ունեցած աղբեցութիւնը մտրդկային կեանքի վրայ: Ամենից առաջ զարգանում է բժշկական գիտութիւնը և սկզբում կապուած է լինում խորհրդաւորութեան և կրօնի պահպանողական տարրերի հետ: Նախնական մարդու բանականութիւնը դեռ զարգացած չէ և նա կեանքի ձախորդութիւնների ժամանակ՝ հիւանդութեան, անդամալուծութիւն և նման դժբախտութիւնների դէպքում դիմում է ինչ որ խորհրդաւոր ոյժերի օգնութեան և նրանցից է սպասում օգնութիւն ու մխիթարութիւն: Քուրմ—կախարդը դառնում է բժիշկ. շատ ուշ այս երկու արհեստները բաժանուում են իրարից: Հիւանդութեան պատճառ համարում են յաճախ որ և է կախարդի թախսման դրելը, չար ոգու ներշնչումը. այդ պատճառով աշխատում են հակաթախսման գրել կամ չար ոգուն հալածել ազադակներով ու վայրենի պարերով: Սորհրդաւոր բժշկութեան հետ գործադրում են նաև փորձերի

վրայ հիմնած բժշկական միջոցներ: Ամեն ժողովուրդ ունի իւր բժշկական միջոցները, որ մեծ մասամբ բոյսերի օգնութեամբ են կատարուում: Զարմանալի է, որ շատ նախնական ժողովուրդներ գիտեն պատուաստելու միջոցը. ըստ երևոյթիւն ծաղիկ պատուաստումը յայտնի է եղել հին Չինաստանում Գարսկաստանում և հիւսիսային Աֆրիկայում:

Ընդհանրապէս ասելի հեշտ է ծանօթանալ գոյութիւն ունեցող հասարակութեան կենսական երևոյթիւների հետ, քան հետադուսել առանձին անհատի հոգեկան կեանքը: Ամենից առաջ պէտք է աշխատել որոշել նախնական ժողովուրդների մէջ մնացած պատմական անցեալը մանաւանդ ճիւղազրական տեղեկութիւնները: Այն ժողովուրդները, որոնց մէջ պահուել են անցեալից մութ յիշողութիւններ, յաճախ ունենում են նախնիների ցանկը. այդտեղ իհարկէ ժամանակագրութիւն չկայ, իսկ եթէ պահպանում է, շատ երևակայական է լինում: Կարնոր անցքերի ժամանակամիջոցները մեծացնում են. հակումն կայնաւ մեծ պատմական դէպքերը դարագլուխ դարձնել և դրանցից հաշիւ սկսել:

Կուլտուրական ժողովուրդներն էլ չունեն իրենց ծագման և գոյութեան իսկական պատմութիւնը, եթէ երբ և է աշխատեն այդպիսի պատմութիւն գրել, պէտք է նախ ամուր հիմնք ձգել, որի համար հարկաւոր է այն պարզ, բայց քիչ հասկանալի, սկզբնական երևոյթիւնները քննել, որոնց վրայ բարձր քաղաքակրթութեան մեծ տաճարն է կառուցուում: Այդ հիմքը ձգելու համար պէտք է շատ, գործը հասկացող աշխատաւորներ, յամառ ու ծանր աշխատանք կատարեն:

Հեղինակը իւր աշխատանքը վերջացնում է այն միտքը յայտնելով, որ իւր այս աշխատութիւնը միայն նախապատրաստութիւն է նախնական կուլտուրայի իսկական և բաղմակողմանի պատմութեան:

Pessimist

